ԵՊՀ ԻՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ 5-ԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ /2026-2031թթ./

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական և գիտական ոլորտների բարեփոխումների առաջնահերթությունները, ինչպես նաև ԵՊՀ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելությունն ու 2025-30թթ. զարգացման ռազմավարարական ծրագիրը, Տնտեսագիտության ֆակուլտետում առաջիկա 5 տարիներին նպատակահարմար է իրականացնել հետևյալ գործընթացները.

1. ***<u>Դիմորդների հետ տարվող աշխատանքներ</u>***

1.1 Ավելացնել Տավուշի և հարակից մարզերի հանրակրթական դպրոցներ ու քոլեջներ այցերի քանակը՝ ընդգրկելով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակավոր ներկայացուցիչների և ուսանողների, ովքեր կներկայացնեն գործող կրթական ծրագրերի առավելությունները, աշխատանքի հնարավորությունները, ինչպես նաև ֆակուլտետի լավագույն շրջանավարտների գրանցած հաջողություններն իրենց աշխատանքի վայրերում:

1.2 Համագործակցելով ՈՒՄՎ-ի հետ շարունակել կազմակերպել աշակերտների այցեր ֆակուլտետ, որի ընթացքում նրանք կունկնդրեն բարձր որակավորմամբ մասնագետների մասնագիտական դասընթացների ակնարկային դասախոսություններ և կծանոթանան ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի, իրականացվող աշխատանքների և ուսանողական կառույցների հետ:

2. ***<u>Կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված աշխատանքներ</u>***

2.1 Պարբերաբար իրականցվող մոնիթորինգի արդյունքների վերլուծության հիման վրա ֆակուլտետում գործող «Ֆինանսներ/ըստ ոլորտի/», «Զբոսաշրջություն» բակալավրի և «Գործարար վարչարարություն/կառավարում/» մագիստրոսական կրթական ծրագրերում կատարել բարելավման գործընթացներ՝ կրթական վերջնարդյունքները համապատասխանեցնելով նախանշված նպատակներին:

2.2 Ուսումնասիրելով աշխատաշուկայի զարգացման միտումները և պահանջարկը, հաշվի առնելով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների առաջարկները և ՄԿՈԱ բաժնի կողմից պարբերաբար իրականացվող հարցումների միջոցով ներքին և արտաքին շահակիցների կողմից վեր հանած կրթական կարիքները և առաջարկները կազմել գործողությունների փաթեթ՝ ԿԾ-երը բարելավելու նպատակով:

2.3 Բարելավել պրակտիկաների ծրագրերի բովանդակությունը՝ ուղղորդելով մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ արդի հետազոտական մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչների օգտագործմամբ և ընդլայնել անցկացման վայրերի ցանկը:

2.4 Համագործակցելով պրակտիկա անցկացնող կազմակերպությունների հետ հիմնական միտումները սահմանել ձեռք բերած տեսական գիտելիքների գործնական կիրառումը, ուսանողների գիտելիքները կառավարման ու բազմաբնույթ գործառույթների վերաբերյալ պրակտիկ կարողությունների ձեռքբերումը, տարբեր գործատուների հետ առնչությունը, տեսական և գործնական կապի ամրապնդումը, ինչպես նաև հետագա աշխատանքի համար կողմնորոշումը:

2.5 Օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով ներդնել օտարալեզու (անգլերեն, ռուսերեն) դասընթացներ, կամ որոշ դասաժամերի ընթացքում նյութի օտար լեզվով մատուցման հնարավորություններ:

2.6 Կրթական ծրագրերի ղեկավարների համար ձևավորել հստակ աշխատանքային շրջանակ, զարգացնել նրանց կարողությունների շարունակական ու ռեսուրսների արդյունավետ բաշխման ու կառավարման հմտությունները:

2.7 Մշակել և ներդնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի ժամերի/բեռնվածության արդյունավետ օգտագործման և արդյունքների հաշվառման/չափման մեխանիզմներ:

2.8 Ապահովել արտալսարանային խորհրդատվությունների իրականացման պայմաններ (office hours):

3. ***<u>Կրթության որակի ապահովմանն ուղղված աշխատանքներ</u>***

3.1 Համագործակցելով ԵՊՀ-ի կամ մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների հետ պարբերաբար իրականացնել պրոֆեսորադասախոսական համակազմի վերապատրաստումներ՝ դասավանդման և ուսումնառության նորագույն մեթոդներին ծանոթացնելու նպատակով:

3.2 Հետևելով կրթությանը ներկայացվող դինամիկ փոփոխվող պահանջներին և ուսանողների կրթական պահանջմունքներին ապահովել անհրաժեշտ

նյութատեխնիկական միջոցներ՝ այդ թվում լսարանային, էլեկտրոնային, տեխնիկական։

3.3 Լավագույն շրջանավարտներին ուղղորդել շարունակական կրթության և նրանցով համալրել տեղացի դասախոսների համակազմը:

3.4 Շարունակել ակտիվ համագործակցությունը ֆակուլտետի հիմնական ոլորտային գործընկերների՝ ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, Տավուշի մարզպետարան, Իջևանի համայնքապետարան, առևտրային բանկերի Տավուշի մասնաճյուղեր, հարկային, մաքսային և զբոսաշրջային կազմակերպություններ, հյուրանոցառեստորանային համալիրներ հետ՝ կազմակերպելով մասնագիտական արդյունավետ պրակտիկաներ, ինչպես նաև լրացնելով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմը՝ հրավիրյալ բանիմաց աշխատակիցներով:

3.5 Մշակել մեխանիզմներ ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով։Կազմել գործողությունների պլան-ժամանակացույց, որը կներառի կոնկետ գործնական դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ, ինքնուրույն աշխատանքների և առաջադրանքների իրականացումներ, որում ներգրավել նաև ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների։

3.6 Խթանել ֆակուլտետի ակադեմիական համակազմի գիտական ակտիվությունը՝ ներգրավելով ուսանողների և երիտասարդ դասվանդողների։

3.7 Իրականացվելիք հետազոտական աշխատանքների մեջ առանձնահատուկ ուշադրության արժանացնել ուսանողների ինքնուրույն աշխատելու և առաջադրված խնդիրների համար լուծումներ գտնելու ունակություններին։

3.8 Բարձրացնել ֆակուլտետի հետազոտությունների տեսանելիությունը՝ հոդվածներ հրապարակելով միջազգային ամսագրերում և մասնակցելով միջազգային գիտաժողովների:

4. ***<u>Ֆակուլտետի ուսանողական առօրյայի արդյունավետ կազմակերպման աշխատանքներ</u>***

4.1 Ֆակուլտետի ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում առանցքային դերը սահմանել ուսանողի կրթական ձեռքբերումները, առաջադիմությունն ու հաջողությունները:

4.2 Ոլորտի բարձրակարգ մասնագետների մասնակցությամբ ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աջակցությամբ կազմակերպել քննարկումներ, մասնակցել հանրապետական և միջազգային աշխատաժողովներին և ձևավորել մշակույթ՝ կրթական, գիտական ու հասարակական ակտիվությունը:

4.3 Կազմակերպել գիտական սեմինարներ՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելով ուսանողներին, նրանց մեջ նոր գիտելիքներ ձեռք բերելու, հետազոտական կարողություններ զարգացնելու, ստեղծագործական և վերլուծական մտածողություն ձևավորելու նպատակով:

4.4 Ակտիվ համագործակցել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հետ, կազմակերպել ուսանողների փոխադարձ այցեր, ստեղծել հնարավորություններ տեղում մասնագիտական դասաժամերին մասնակցելու համար:

4.5 Հարմարեցնել ուսումնական տարածքները ուսանողի կրթական կարիքներին՝ ԿԾ-ի իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ԿԾ իրականացման պատասխանատուների կողմից համապատասխան չափանիշների ներկայացման հիման վրա:

5. ***<u>Ֆակուլտետի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքներ</u>***

5.1 Շրջանավարտերի հետ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ, նրանց ներգրավել տարաբնույթ միջոցառումներում և գործընթացներում, պարզաբանել այն խնդիրները, որոնց հետ բախվում են նրանք աշխատանքի ընթացքում և այդ կարևոր տեղեկություններն օգտագործվել ԿԾ-երի բովանդակությունները բարելավելու և ավելի համապատասխանեցնելու աշխատաշուկայի արդի պահաջներին:

5.2 Դիտարկել որպես առաջնահերթություններ ֆակուլտետի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման ընթացքում բուհի հեղինակության բարձրացման, ինչպես նաև բուհ-հասարակություն և բուհ-պետություն համագործակցության զարգացման հեռանկարները:

5.3 Համագործակցության շրջանակներում օգտագործել շահակիցների ռեսուրսներն ու հնարավորությունները՝ մասնագիտական պրակտիկաների արդյունավետ իրականացման համար:

5.4 Ծրագրի շրջանավարտներին ներգրավել ուսանողների հետ տարվող մասնագիտական և խորհրդատվական աշխատանքներում, օգտագործել կարիերայում նրանց ունեցած հաջողությունները՝ ուսանողների մոտ մասնագիտության և ֆակուլտետում ստացած կրթության նկատմամբ վստահություն ձևավորելու համար։

5.5 Իրականացնել տեղեկատվական նախագծեր գործընկեր լրատվամիջոցների հետ:

5.6 Մասնաճյուղի մտավոր արդյունքը շուկայացնելու նպատակով արդյունաբերության ներկայացուցիչների հետ կազմակերպել խորհրդակցություններ ՝ գիտահետազոտական կարիքները հստակեցնելու համար։

Վերոնշյալ գործընթացները իրականացնելու համար ակնկալում եմ ֆակուլտետի ողջ կոլեկտիվի և ուսանողների հետևողական ու քրտնաջան աշխատանքը, որը կբերի գործունեության ակտիվացմանը, բարելավմանը և արդյունավետ զարգացմանը։

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի

դեկանի պաշտոնակատար՝ Ա. Շ. Մարգարյան